

ՆՈՐ ՏԱՐԻ

Արի հիմա, իմ Նոր տարի, Արի նորից ընկերանանք, Իմ հույսերի մոմն էլ վառիր, Իրար սիրենք, ընտելանանք:

Որոնել են քեզ շարունակ, Սպասել են ամեն տարի, Բայց չես մտել իմ հարկի տակ, Մոռացել ես որդու բարի:

Ամեն տեղ ես դու թափառում, Ամենքին ես զնում այցի, Տոնածառեր բոցավառում Ընդառաջում ամեն հայցի:

Իսկ ինձ երբեք չես էլ հիշում, Թողել ես ցուրտ հողմերի դեմ, Մոլորվել եմ այս մշուշում, Ոչ մի ճամփա էլ չգիտեմ...

Արի հիմա, իմ Նոր տարի, Արի այսօր ընկերանանք, Իմ հույսերի մոմն էլ վառիր, Իրար սիրենք, ընտելանանք:

ՄԻՐԵԼԻ

ԸՆԹԵՐՉՈՂՆԵՐ,

Ամեն Նոր տարում մենք հավատում ենք, որ այսուհետ ամեն ինչ այլ կերպ կլինի: Խնդիրները կմնան անցյալում, տհաճություններն ինքնին կվերացվեն և կսկսվի լրիվ նոր կյանք: Քանի որ, տարվա գլխավոր մոլորակն Արեգակն է և խորհրդանիշը՝ Առնետը, ապա հավատանք, որ 2008թ., իրոք, կլինի խոստումնալից: Ամենուրեք կգերիշխի Արեգակի և Հողի տարրերը, որի շնորհիվ յուրաքանչյուրիդ մոտ կարթնանան նախածեռնության ոգին, կակտիվանան կամային հատկանիշները: Նոր տարում թող մեր հարգելի հայրենակիցներն ապրեն արժանավայել կյանքով, բարեկանությամբ, իմաստությամբ և երջանկությամբ, իրենց գերծ պահելով նեղատիվ լիցքերից՝ գոռոզամտությունից, ծուլությունից, նենգությունից, խանդից, կատաղությունից, դավաճանությունից, մոլեռանդությունից ու այլ բացասական հույզերից: Թող տարվա գլխավոր մոլորակ Արեգակը ջերմությամբ ու պայծառ լույսով ողորկի ձեր օջախներն ու հողիները: Իսկ «Լուսարձակն» էլ որպես ձեր հավատարիմ ու վստահելի լրատվամիջոց իր էջերում ներկայացնի մեր կյանքում տեղի ունեցող դրական զարգացումները, ինչպես նաև ստվերոտ կողմերը:

Թող 2008թ. դառնա բոլորիդ սպասումների ու հույսերի իրականացման տարի, ամրապնդվի լավատեսությունը վաղվա օրվա համդեպ:

«Լուսարձակի» խմբագրակազմը շնորհավորում է իր ընթերցողներին, մեր տարածաշրջանի ողջ բնակչության և գործընկերների Ամանորն ու Սուրբ ծնունդը:

ՀՀ հանրակրթական դպրոցներում 3-11-րդ դասարանցիների համար ծնեռային արձակուրդը կտևի դեկտեմբերի 24-ից մինչև հունվարի 6-ը: Այն դպրոցների համար, որոնք չեն օգտվել 2007թ. աշնանային և չեն օգտվելու 2008թ. գարնանային արձակուրդներից, ծնեռային հանգստի ժամկետը երկարացվել է մինչև հունվարի 20-ը:

ԼՈՒՍԱՆԱԲՅԱԿ

Հունվար, 2008 թ. թիվ 1 (4540)

Հ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Ն Ք Ն Ե Ր

ՎՈՒՈՂՅԱ ԲԱՂԱՅԱՆ ԳԳ ԱԺ պատգամավոր

ԱՐԿԱՂԻ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ ԳԳ ԱԺ պատգամավոր

Հարգելի հայրենակիցներ, 2008թ. մեր երկրում ընտրական տարի է՝ պատասխանատու հանգրվան նորանկախ մեր Հայրենիքի պատմության մեջ, քանի որ ընտրելու ենք հանրապետության երրորդ նախագահին: Հանդգված են, որ սպիտակցին իր իմաստուն ընտրությամբ երկրի ճակատագիրը կվստահի այն թեկնածուին, որն իր կենսագրությամբ և ներկա գործունեությամբ արդեն իսկ ապացուցել է ազգի առաջնորդը և պետության ղեկավարը լինելու իրավունքը:

Սիրելի՛ սպիտակցիներ, անցնող 2007թ. ՀՀ ԱԺ ընտրությունների տարի էր, որին մեր տարածաշրջանի բնակչությունը մասնակցեց մեծ ակտիվությամբ, իրենց վստահության քվեներով նաև անձամբ ինձ, որն ինչ խոսք պարտավորեցնող է: Սատարելով հայրենի իշխանություններին իմ պատգամավորական գործունեությամբ ամեն ինչ անելու եմ զալիք երկու տարիներին և հատկապես 2008թ. նպաստելու 1988թ. դեկտեմբերյան աղետից առաջացած խնդիրների լուծմանը:



ԻՆՉՊԻՍԻՆ ԷՐ 2007 Թ. ԵՎ ԻՆՉ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՔ 2008-ԻՑ

ԿԱՌԱՆ ԱՐՈՒՄՅԱՆ

Անշարժ գույքի կադաստրի Սպիտակի տարածքային ստորաբաժանման ղեկավար



2007թ. ընդհանուր առմամբ եղավ արգասաբեր գործունեության տարի: Ավելացել են անշարժ գույքի գրանցման, օտարման, վարձակալության, գրավադրման և այլ գործարքների ընդհանուր քանակները, որը վկայում է այն մասին, որ տեղաշարժ կա և հետևապես առկա է՝ տնտեսական աճ: Հատկապես ավելացել է գրավադրումը, որը կատարվում է տրանսպորտի վարկերի դիմաց:

Ֆիզիկական անձինք, ինչպես նաև հարկային մարմինները: Առաջիկա 2 տարիների ընթացքում նախատեսվում է կադաստրի ավտոմատացում, պետք է ստեղծվի վեբ-կայք, որում կտեղադրվի ողջ տեղեկատվական բանկը, որի շնորհիվ մեզանում առաջին անգամ հնարավոր կդառնա իրականացնել պետական կառույցի կողմից էլեկտրոնային պետական կառավարում: Այն գործելու է հետևյալ մեխանիզմով՝ քաղաքացին կարող է կապի միջոցով ուղարկել իր փաստաթղթերը, ստանալ պետական գրանցում և հետագայում կապի միջոցով էլ ստանալ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը: Այս գործառնությամբ պարունակում է նաև հակակոռուպցիոն քայլ, քանզի նվազագույնի է հասցնում, կամ ընդհանրապես վերացնում է շփումը քաղաքացու և պետական պաշտոնյայի միջև:

Մեր կառույցը ունի շենքային կայանների բարելավման խնդիր: Նախատեսվում է առաջիկայում գնել կամ կառուցել նոր մասնաշենք, ինչը հույս ունենք, որ կիրագործվի:

Օգտվելով առիթից իմ և սեկտորի ողջ աշխատակիցների անունից շնորհավորում են մեր ժողովրդի Ամանորը, ցանկանալով նրանց առողջությունը հաջողություններ, ամենայն բարիք և Սպիտակցու համար կարևորագույն հիմնահարցի՝ աշխատատեղերի ստեղծման խնդրի լուծում:

ԿԱՐԱՊԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՀՀ պետական ռեզիստրի գործակալության Սպիտակի տարածքային բաժնի պետ

Պետեզիստրում 2007թ. ընթացքում զգալիորեն ավելացել են գրանցումները: Ըստ գրանցման ցուցանիշների ակտիվացել է մանր և միջին բիզնեսի ոլորտը: Արդեն մաքրվել և հստակեցվել է հարկային դաշտը: Դեռևս 1994թ-ից կային գրանցված անհատ ձեռներեցներ, որոնք գործունեություն չէին ծավալում և հարկային ու սոցապահովության մարմիններում կուտակել էին պարտքեր: Մանրամասն քննարկվել է նրանց հետագա գործունեությունը ծավալելու հնարավորությունները և շուրջ 185 անհատ ձեռներեցներ, ովքեր, որ այլևս ի վիճակի չէին գործելու հանվել են գրանցումից: Կառավարությունը զիջել է նաև նրանց կուտակած բյուջետային պարտքերը:



2007թ-ի ընթացքում կատարվել են 25 իրավաբանական անձանց ... => 2

ՀԱՅՐ ԱՎԵՏԻՔ ԱԲԵՂԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Սպիտակի սրբ. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ



Սպիտակի տարածաշրջանը 2007-ի սեպտեմբերից բաժանվել է երկու վարչական հոգևոր միավորների՝ առաջինը իմ հովվությամբ ներառում է Սպիտակ քաղաքի և տարածաշրջանի տաս համայնքներ՝ Ջրաշեն, Լեռնավան, Սարանեջ, Ղուրսալի, Նոր Խաչակապ, Գեղասար, Կաթնաջուր, Ծաղկաբեր, Հարթագյուղ և Խնկոյան, իսկ երկրորդը՝ Տեր Մովսես քահանա Աշուրյանի հովվությամբ ներառում է Արևաշող, Լեռնանցք, Սարալանջ, Սարահարթ, Շենավան, Շիրականուտ, Մեծ Պարնի, Քարածոր, Գոգարան և Լուսաղբյուր համայնքները:

2007թ. վերաբացվել են Սարահարթի, Սարալանջի եկեղեցիները, շուտով կբացվի նաև Մեծ Պարնիի եկեղեցին, ծրագրված է առաջիկայում վերաբացել Լեռնանցքի Սև վանք և Շիրականուտի Չիխանավանք եկեղեցիները:

Սա ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը աստիճանաբար վերադառնում է իր ավանդական, ազգային

Հայ Առաքելական եկեղեցուն և նրա քրիստոնեական ավանդույթներին ու ազգային արժանույթին: Ծնորհավորում են մեր ժողովրդին Նոր Տարվա կապակցությամբ, մաղթելով ամենայն բարիք և աղոթք հղում առ Աստված, որ Նա բարեհաճ գտնվի հայ ժողովրդի հանդեպ և վերստին հաստատի իր հոգևոր թաղանթները:

ԱԼԻԿ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ՎՏԲ Հայաստան բանկի Սպիտակի մասնաճյուղի կառավարիչ



2007թ. ընդհանուր առմամբ հաջող տարի էր մեր բանկի գործունեության համար: Բանկային գրեթե բոլոր գործառնությունների գծերով կտրուկ ավելացել են մատուցվող ծառայությունների ծավալները: Ծառացել են հատկապես վարկավորումը, բանկի միջոցով կատարվող անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքները, վարձավճարների սպասարկումը, ավանդա- => 2

ՀԱՄԱՐՈՒՄ

- «ԼՈՒՄԱՐԶԱԿԻ» ԱՄՆԱՐԻՅԱ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ ԿՑ 2
- «ԼՈՒՄԱՐԶԱԿԻ» ՀՅՈՒՐԱՄՐԱՀՈՒՄ Է ՀՀ ՈՒՄ ՈՒԿԱՐԻՆԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ Ա. ԲՈԺՎՈՆ ԿՑ 3
- ՄՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2007 ԿՑ 4
- 2008Թ. ԱՌՆԵՏԻ ՏԱՐԻ Է ԿՑ 4



1 ←

ԿԱՐԱՊԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Նոր գրանցումներ, որոնց թվում են նաև մի շարք նախկին համայնքային ենթակայության բյուջետային կազմակերպություններ, ինչպես օրինակ Երաժշտական, մարզական դպրոցները, մանկապարտեզները և այլն, որոնք վերակազմակերպվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Կատարվել են նաև 75 նոր անհատ ձեռնարկատերերի գրանցումներ, որոնք ներկայումս գործում են և կատարում են պետական վճարումները: 2008թ-ին մենք ակնկալում ենք, որ բոլոր կազմակերպությունները, ձեռնարկությունները, անհատ ձեռնարկեցները և այլ սյուբեկտներ չեն կարող ճանաչվել օրինական և ծավալել գործունեություն, կամ ունենալ իրավասություններ, քանի դեռ չեն գրանցվել պետեզիստում, որն ինչ խոսք կբերի հարկային դաշտի հստակ գործունեության և պետական եկամտների մեծացման: Այդ վիճակին մենք կհասնենք մեր կողմից տարվող հետևողական աշխատանքով:

Օգտվելով առիթից շնորհավորում են մեր ժողովրդի Նոր տարին, ցանկանում բարգիսավաճ գործունեություն և բարգավաճ կյանք:

1 ←

ԱԼԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

տունների քանակը և ավանդների տոկոսադրույքները բարձրացել է մինչև 9,5%: Վարկավորման շնորհիվ առաջխաղացում կա փոքր բիզնեսի բնագավառում: ՎՏԲ Հայաստան բանկը ամենախոշոր և ամենալայն տարածում ունեցող բանկն է Հայաստանում: Ինչն էլ խոստանում է 2008թ. դառնալ տարածաշրջանի ֆինանսական կենտրոն: Ես հավատում եմ Հայաստանի հուսալի ապագային, Հայաստանը կդառնա անդրկովկասյան տարածաշրջանի և ֆինանսական խոշոր կենտրոն: Ինձ ուրախացնում է այն հանգամանքը, որ արտերկրից մեր քաղաքացիները աստիճանաբար ետ են վերադառնում և ցանկանում են այստեղ ապրել ու կազմակերպել իրենց աշխատանքն ու բիզնեսը: Ես իմ կողմից խրախուսում եմ նրանց՝ տրամադրելով անհրաժեշտ վարկեր, որը հնարավորինս կկանխի արտագաղթը: Ցանկալի կլինեի 2008թ. բոլոր նրանք, ովքեր ունեն հնարավորություն զբաղվեին աշխատատեղերի ստեղծման լրջագույն խնդրով:

Շնորհավորում են բոլորի Նոր տարին, մաղթում առողջություն, հաջողություններ, լցվեք լավատեսությամբ և հավատով, մենք լավ հեռանկարներ ունենք:

ԱՄԱՆՈՐՆ ՈՒ ՄԵՆՔ

Կաղանդ, Լավասարդ, Ամանոր, Նոր տարի... Տարբեր ժամանակներում տարբեր անուններով, բայց Ամանորը միշտ էլ հայերի մեջ ամենատարածված, սիրված ու ընդհանրական տոնն է. այն մշտն է բոլոր հայերը՝ անկախ ամեն ինչից:

Իսկ ինչպե՞ս ենք մենք պատրաստվում Ամանորին և ի՞նչ է այն մեզ համար:

Ամանորից դեռ մեկ ամիս առաջ հանում ենք մեր խնայողությունները, լայն բացում քսակի բերանն ու սկսվում է խելամեղ առևտուրը. գնում ենք ամեն ինչ՝ մեծ քանակությամբ սննդամթերք, տան տոնական զարդարանքի պարագաներ, հագուստ...: Տանտիրուհիների համար Ամանորը նախ և առաջ բնակարանի հիմնովին մաքրումն է՝ ամենայն մանրամասնությամբ, իսկ տոնից մի քանի օր առաջ սկսվում է բազմատեսակ ուտեստների նախապատրաստումը: Երեխաներն ամբողջ տարին ամհամբերությամբ են սպասում Նոր տարուն՝ իրենց երազած նվերը Ձմեռ պապիկից վերջապես ստանալու ակնկալությամբ:

Չմայած նախապատրաստական այս թոնուրիին՝ Ամանորը մեզ համար ունի կարևոր ու մեծ նշանակություն: Ամանորին մոռացվում են բոլոր վեճերն ու տարածայնությունները, բոլոր խնդիրները և տոնական օրերին բոլորը համակվում են բարության ու լավատեսությամբ՝ հույսով, որ հին տարին իր հետ կտանի բոլոր անհաջողություններն ու փորձությունները, իսկ նորը իր հետ կբերի միայն բարություն, լիություն, սեր ու համերաշխություն:

Ամանորն այն տոնն է, երբ ամբողջականացնում է հայ ընտանիքը, Ամանորի սեղանի շուրջն են հավաքվում օտար ափերից վերադարձած պանդուխտները:

Իր ծանրաբեռնվածությամբ հանդերձ Ամանորը ամենասպասված տոնն է. մենք միշտ էլ անհամբերությամբ ենք սպասում նրան և Ամանորի զիջերը պահում մեր ամենամիլրական ու գաղտնի փայփայած երազանքները՝ հավասարով, որ այս տարի դրանք կիրականանան:

Այնպես որ մենք սրտանց ասում ենք.

- Արի, Նոր տարի, գալը բարի 2008 թվական:

Վանուհի Ափուջանյան

«ԼՈՒՍԱՐՁԱԿԻ» ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Ալեքսանդր Բոժյոն
ՀՀ Ուկրաինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան

Եղբայր Ուկրաինացի, Կրթվել էք հայեցի, Դուք իսկը հայ էք Եվ հայաստանցի: Մենք ունենք նաև Պաբլո Տիչինա Եվ Կոչևսկի, Որոնք գիտեին Արժեքն հայ խոսքի: Մեր եղբայրությունը Գանձ է և ոսկի, Սերը եղբայրական Կհաղթի չարին, Թող շնորհավոր Լինի Նոր տարին:

Աստղիկ Գևորգյանին
Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ

Գևորգյան Աստղիկ, Ձեզ՝ բարի կաղանդ Ի վերուստ ունեք Դուք բարի տաղանդ, Ուսուցիչ՝ մամուլ Եվ՝ ողջ հանրության Սրբեք մամուլը Ի սեր հայության:

Ռաֆայել Կարապետյանին
Գեներալ-մայոր

Արդարադատության գեներալ արդար՝ Դարձյալ օրենքին պաշտպան ու սատար, Կյանքդ երկարի, ապրեք մի ողջ դար, «Լուսարձակը» շնորհավորում է Ձեր Ամանորը Ձեզնից մշտապես անպակաս լինի լավ օրը:

Սերգո Ավետիսյանին
Սպիտակի ոստիկանության պետ

Սպիտակի ոստիկանության պետ, Կայունություն և վստահություն բերեցիք ձեզ հետ, Ժողովուրդը ձեզ սիրեց անպատճառ Քանգի ճանաչեց Ձեր գործն անաչառ: Մեր մաղթանքները՝ Ձեզ տոնի առթիվ Տարին թող բերի բարիքներ անթիվ:

Ալեքսանդր Շաքարյան
Երևանի քաղաքապետարանի տնտրի և սպասարկման փբը տնօրեն

Հրգելի պարոն Շաքարյան Ալիկ Ունեք հզոր խելք, հսկա գիտելիք, Ձեր գործում ունեք անելիք: Գործերով քայլեք դեպի լավ գալիք Շնորհավոր Ձեր Ամանորը, հարգելի Ալիկ:

Սուրիկ Տռուզյանին
Նոր Խաչակապի գյուղապետ

Նոր Խաչակապի գյուղապետ հարգելի Համյնքը հողին հենվել է էլի, Հաղթել կորստին ջանքով գովելի, Լավ գործով կյանքը դարձրել շեն ու լի: Շնորհավորում ենք Նոր տարվա առթիվ, Ցանկանում բարիք անքանակ, անթիվ:

Լաուրա Ջաքարյանին
Սարալանջի դպրոցի տնօրեն

Լաուրա Ջաքարյան տնօրեն եք դպրոցի Եվ մարդ կերտող «հնոցի»: Շնորհավոր Նոր տարին Թող Ձեզ բերի մեծ բարին:

Հրանուշ Հակոբյանին
ՀՀ ԱԺ պատգամավոր

Շնորհավոր Ձեր Նոր տարին, Հրանուշ Թող լինի Ձեր կյանքն երջանիկ ու ամուշ, Ձեզ՝ խիստ պատվեր ժողովրդից, Հրանուշ. Ուսման գործը կարգավորեք Անով, դողով, շատ զգուշ, Հայ երեխան պետք է կրթվի լիաութ, Քանգի չկա բանականից հզոր ուժ:

Հովիկ Սահակյանին
Սոցապահովագրության պետական հիմնադրամի նախագահի տեղակալ

Ջահել եք, Հովիկ, Բայց արդեն ունեք Դուք պաշտոն ու դիրք: Ձեզ մաղթենք թռիչք՝ Հասնեք էլ՝ բարձրին, Մեծ շնորհ բերի Նաև այս տարին:

Ալբերտ Մխիթարյանին
Գործարար (Նախկին արևաշողից)

Հայրենակից մեր գործարար, Գործ ես հիմնել ազնիվ, արդար Եվ քաղաքում էջմիածին, Աստված գործիդ լինի սատար Եվ նվաճես աշխարհն արար: Մեր մաղթանքն ու գոհությունը՝ «Լուսարձակից» Շնորհավոր Ամանորդ, հայրենակից:

Կանո Սիմոնյանին
Աբրու գյուղապետ

Երբ բանիմաց է համայնքապետը, Համայնքին գերան կբերի գետը: Լուրջ ձողի մեջ նստած Աբրուին Վստահ է նայում իր վաղվա օրին: Շնորհավորում ենք Ձեր Ամանորը Թող լավ գործերով արժանավորվի Ձեր ամեն օրը:

Արամ Մանուկյանին
Երկրապահների միության նախագահ, Սպիտակի էլ ցանցի տնօրեն

«Թող մարմինս այրվի խարույկի վրա, Փոխարենը՝ փրկվի Հայաստան», Այս զգացումով նետվեցիք մարտի Ողջ Ֆիդայիությունն ու Դուք՝ Արամ Մանուկյան: Շնորհավորում ենք Ձեր Ամանորը Դարից առավել լինի Ձեր օրը:

Արտաշես Փարսադանյանին և Նելի Բաբայանին
«Այրեքսի» աշխատակիցներ

«Այրեքս», աջակցի լրագրողին, Որ երկրին ցույց տա զարգացման ուղին, Այս գործի մեջ են Արտաշես ու Նելին, Շնորհավորում ենք նրանց մենք էլի, Մաղթում, որ տարին լավ գործեր բերի:

Արթուր Գալոյանին
Գոգարանի գյուղապետ

Գոգարանի գյուղապետ Արթուր, Քո բարի կամքով միշտ լավը գործիր, արդարին ուժ տուր, Համայնքիդ համար ողջ եռանդդ տուր, Վատ բանի հանդես դեմ կանգնիր, «առ թուր», «Լուսարձակը» շնորհավորում է Ձեր Սուրբ Ծնունդն ու Ամանորը, Սիրելի Արթուր:

Վուդոյա Բադայանին
ՀՀ ԱԺ պատգամավոր

Թող հայի սրտից Եվ Աստծո կամքից Բխի օրենքը, Եվ թող այն դառնա Մեր նորոգ կյանքի Հանապազ գեները Դուք օրենքին ճիշտ արդար Կողմնակից եք և սատար, Սպիտակցի պատգամավոր «Լուսարձակը» Ձեզ ողջույն է հղում. Շնորհավոր Սուրբ ծնունդ և Ամանոր:

Ռոբերտ Ասմանյանին
Գործարար (Մոսկվա)

Արևաշողի գավակ՝ Ռոբերտ, Գործարարության մեջ կայացած Դուք՝ բերդ, Կառուցում, արարում եք Ռուսաց հողում, Բարիքներ գործում Արևաշողում: Այս Ամանորին մաղթանք ենք հղում. Ձեզ՝ առողջություն, մեծ հաջողություն, Նաև բիզնեսի մեծ առաջնորդում՝ Գործեր ձեռնարկեք և հայրենի հողում:

Մարինա Մխիթարյանին Իրինա Փահլեվանյանին
Հերմինե Գաբրիելյանին «Եվրասիա» հիմնադրամի «Մարզային մամուլի հզորացում» ծրագրի աշխատակցուհիներ

Ղեկավարում եք իսկա ծրագիր, Որ հզորանան թեք ու լրագիր, Աշխատակցուհիներ քնքուշ, հարգարժան, Դուք, գովասանքի, սիրո եք արժան: Շնորհավորում ենք ձեր գալիք տարին, Այն թող ձեզ բերի միմիայն բարին:

Ալբերտ Պապոյանին
Շիրակամուտի գյուղապետ

Դուք շատ անաչառ ղեկավարում եք Շիրակամուտը, Ազնիվ եք Ալբերտ, չեք սիրում սուտը, Առատ է նաև գրի ու գրչի Ձեր կալուկուտը: Ձանք թավեք Ալբերտ, որ բնակիչների շահ եկամուտը, Որ ծաղկի, փթթի Շիրակամուտը: Բարին մաղթելով շնորհավորում ենք Ձեր տարեմուտը:

Արմեն Պապոյանին
Կաթնաջուրի գյուղապետ

Ամենուրեք յուրահատուկ, ակտիվ մարդ է կաթնաջուրցին, նա հարգանքով, սրբությամբ է վերաբերվում աղ ու հացին, Ավանդական մեր հայկական նիստ ու կացին: Եվ գյուղապետ Պապոյանին շատ է սիրում կաթնաջուրցին: Մենք էլ մաղթում ենք բոլորին՝ Շնորհավոր լինի տարին:

Արկաղի Համբարձումյանին
ՀՀ ԱԺ պատգամավոր

Գյուղերն ստացան «կապույտ վառելիք» Բայց էլի շատ կան հոգս ու անելիք: Մեր պատգամավոր, երախտապարտ ենք գործին ձեր բարի Շնորհավորում ենք գալիք Նոր տարին, Մաղթում անսահման, անսահման բարին:

Գեորգի Թովմասյանին
Գեղանկարիչ, ՎՊՄԻ արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,

Գեղանկարիչ Գեորգի Թովմասյան, Թող Ձեր գործերով կրթվի մասսա, Քարոզեք սերը, ցույց տվեք բարին, Եվ «Հայկականը» հայտնեք աշխարհին Շնորհավորում ենք մենք Ձեր Նոր տարին, Թող այն Ձեզ բերի ամենայն բարին:

Գազիկ Աթաբեկյանին
Վանձորի «Մաշտոց» ՀԿ-ի նախագահ, «Մաշտոց» հանդեսի գլխավոր խմբագիր

Հարգելի Գազիկ, մեր Լուռու մարզում Մշակութային Ձեր «խոսքն» է ազդու, Հանդեսն ու «թիմը» կոչել եք «Մաշտոց», Գնահատում եք և վաստակն այլոց. Շնորհում մեղալ «Վազգեն Ա Կաթողիկոս ամենայն հայոց», Շնորհավորում ենք մենք և Ձեր Նոր տարին և համայն հայոց:

Քաջայր Նիկողոսյանին
«Հայկոստի» Սպիտակի մասնաճյուղի տնօրեն

Մեր Նիկողոսյան Քաջայր սիրելի, Գործերդ ազնիվ են ու շատ սիրելի: Դուք կաթնաջուրցի Որոտի որդի, Թող Ձեր ֆինանսը գետի պես հորդի, Ձի այն օգուտն է և ժողովրդի: Դուք ձեր գործի մեջ և տնօրեն եք և լավ բարերար, Օրհնյալ եք և դուք և Ձեր հայրն ու մայր «Լուսարձակը» շնորհավորում է Ձեր Նոր տարին Քաջայր:

Գարուշ Դունամայանյանին
Շենավանի գյուղապետ

Գյուղապետ Գարուշ, Ունեք խելք ու ուժ, Արտահանում եք Դուք աղբյուրների Ձուրը մեր անուշ Ու վաճառում եք չինացու վրա, Երբ ողջ աշխարհն է ողողված հիմա ապրանքից նրա: Շնորհավոր Ձեր եկող Նոր տարին, Մեր ջուրը տարեք ամբողջ աշխարհին:

ԱՐԹՈՒՐ ԱՐԻՎՈՒՄԸ ԴԱՐՁՅԱԼ ՈՒԺԵՂԱԳՈՒԷՆՆ Է

IBF վարկածով միջին քաշում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը հերթական անգամ հաջողությամբ պաշտպանեց ուժեղագույնի տիտղոսը: Մրցամարտը տեղի ունեցավ Բագելունդ դեկտեմբերի 8-ին: Նրա մրցակիցը անգլիացի բռնցքամարտիկ Ուենյն Էլկոկն էր: 2-րդ ռաունդում արդեն Արթուր Աբրահամը նոկդաունի ենթարկեց մրցակցին և հետզհետե ուժեղացրեց ճնշումը: 5-րդ ռաունդում, երբ Էլկոկը ևս մեկ անգամ հայտնվեց նոկդաունում, ռինգի մրցավարը դադարեցրեց մեկնամարտը և տեխնիկական նոկաուտով հաղթանակ շնորհեց հայ բռնցքամարտիկին, որը 6-րդ անգամ անընդմեջ պաշտպանեց աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը:

Հ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Ն Ք Ն Ե Ր

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԻ ԱՓՈՒԶԱՆՅԱՆԻՆ



Շնորհավոր ծնունդդ՝ Մեր փոքրիկ Գրիգոր, Քեզ զորավիզ է «Նարեկի» Լույսը զորավոր, Չի դու կրում ես Անունը նրա Յուզ նշանավոր: Մեծացիր օրեցօր Եվ դարձիր հսկա Մի այր զորավոր, Եղիր բախտավոր, ապրիր փառավոր, Հայաստան երկրիդ պարզևկիր լավ օր:

Շնորհավորուն են պապիկը, տատիկները, ծնողները, հորեղբայրները, քեռին, մորաքույրը և բոլոր հարազատները

ԷԼԻԶԱԲԵԹ ԱՐԹՈՒՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Սանկիկ անգին ու անուշ, էլիզաբեթ մեր քնքույշ, Բախտը շքեղ թող ժպտա, Ինչ ցանկանաս քեզ միշտ տա: Թող շնորհավոր լինի ծնունդդ, Եվ նշանավոր լինի անունդ:



Շնորհավորուն են Նարինե, Ջաքար և Նարեկ Սիսակյանները

«ԱՐԵՎԻԿԻ» ՀՈՂԵՐԸ ԶԵՐՄԱՅՐԵՑ ԵՎՐՈՊԱՆ



Ուտերդանուն կայացած մանկական «Եվրատեսիլ-2007» երգի միջազգային մրցույթում, որին Հայաստանը մասնակցում էր առաջին անգամ, մեր համրապետությունը ներկայացնող «Արևիկ» մանկապատանեկան անսամբլը զբաղեցրեց պատվավոր 2-րդ տեղը: Համույթն ընդամենը 1 միավորով գիցեց Բելառուսի ներկայացուցչին, որը վաստակեց 137 միավոր և Հայաստանից առաջ անցավ միայն վերջին փուլում: Երբ մրցանակը հանձնում էին Բելառուսի 11-ամյա տղային, հնչում էր ոչ թե նրա կատարած երգը, ինչպես կարգն է, այլ արևիկյանների «Երազանքը»: «Արևիկին» առավելագույն միավորներ էին շնորհել Վրաստանը, Բելգիան, Կիպրոսը, Ռուսաստանը, Ռումինիան, Նիդեռլանդները և Ուկրաինան, սակայն եղան պետություններ, որոնք որևէ միավոր չտվեցին մեր փոքրիկ երգիչներին: Ըստ մրցույթի պայմանների՝ երգերը պետք է գրեն հենց իրենք՝ երեխաները: Խոսքի հեղինակը

հույ, 21 մարտ - 30 ապրիլ
Կենսասիրությունը, լավատեսությունը ու հմայքը կօգնեն այս նշանի տակ ծնվածներին պատվով դուրս գալ բարոյ իրավիճակներից, հասնել նպատակին: Դուք կրկին կսիրահարվեք և ստիպված կլինեք կանգնել ընտրության առաջ: Ուշադիր եղեք առողջության նկատմամբ՝ հունվար և մարտ ամիսներին: Մայիսին և ամռան ամիսներին կլինեք ակտիվ և աշխույժ: Աշնանային ամիսներին աշխատեք չմոտեցնել ուշադիր եղեք արեստամոքսային համակարգի նկատմամբ: Հունվարին փետրվարին և նոյեմբերին տեղի կունենան իրադարձություններ, որոնք կտուրկ կփոխեն ամեն ինչ ձեր աշխատանքում:

թեր կտա: Առողջության նկատմամբ հատկապես ուշադիր եղեք հունվարին և փետրվարին: Աշխատեք իրաժարվել վատ սովորություններից (ծխախոտ, ալկոհոլ): Կցանկանաք փոխել աշխատանքը: Հիշեք, որ երկվորյակների տանը պետք է թագավորեն լույսն ու օդը: Խորհրդանիշը՝ երկվորյակ, աստղ, քարը՝ ռոնաքար, թիվը՝ 3, գույնը՝ մարմենտ, ճեղքված, դեղին, մոխրագույն, երկնագույն, մանուշակագույն: Բնավորության հատկանշական գիծը՝ շարժունություն:

ՀՈՐՈՍԿՈՊ 2008 ԱՄՆԵՏԻ ՏԱՐԻ



Կույս, 24 օգոստոս - 23 սեպտեմբեր
Աշխատանք կույսերն այս տարի նույնպես կշարունակեն իրենց գործունեությունը: Սակայն աշխատանքը կտա իր փայլուն արդյունքները թե գործնական ասպարեզում, թե անձնական կյանքում: Այս տարի բարենպաստ է անձնական հարաբերությունների կարգավորման, ռոմանտիկ հանդիպումների, հաճելի շփումների համար: Աշխատեք կարգի բերել և վերանայել ձեր սննդակարգը, ձմռանն օգտագործեք մեղր և ընկույզ: Այս տարի այնպես խրված կլինեք աշխատանքի մեջ, որ համարյա ազատ ժամանակ չեք ունենա:

Եթե ղեկավարության կողմից հսկողությունը չափից ավելի լինի, կմահանաք տեղափոխվել այլ աշխատանքի: Խորհրդանիշը՝ կշեռք, քարը՝ զմրուխտ, թիվը՝ 6, գույնը՝ կարմիր, կապույտ: Բնավորության հատկանշական գիծը՝ մեղմություն:

Կարծիք 24 հոկտեմբեր - 22 նոյեմբեր
Գալիք տարուն կաշխատեք լայնացնել ընկերների շրջանակը, կծանրթանք նոր մարդկանց հետ: Կփնտրեք նոր տպավորություններ, նոր զգացողություններ: Այս տարին ձեզ համը սիրային հարաբերություններ ստեղծելու տարի է: Կգտնեք նրան, ում վաղուց փնտրում եք: Առողջական խնդիրներ չեք ունենա: Այս տարի ձեր աշխատանքը կդառնա ավելի հետաքրքիր: Աշնանը տարված կլինեք անձնական կյանքով և առանձնապես չեք ցանկանա մտածել աշխատանքի մասին:

Աղեղնավոր 23 նոյեմբեր - 21 դեկտեմբեր
Բնծին հմայքն ու հունորի գագունը ձեզ կօգնեն այս տարի հասնել երազանքների իրականացմանը: Գալիք տարին կանցնի լարված զգացմունքային մթնոլորտում. կհանդիպեք ձեր երազանքների արքայազնին: Հիմնականում առողջական խնդիրներ չեք ունենա: Տանը հաճախ կազմակերպեք տոներ՝ իրավիճակը ընկերներին և հարազատներին:

Այծեղջյուր 22 դեկտեմբեր - 20 հունվար
Այս նշանի տակ ծնված մարդկանց համար տարին կբերի նորաճող հմարտություններ: Կարևորն այն է, որ նրանք կարողանան ձեռքից բաց չթողնել հաջողությունը: Համարյա բոլոր ձեռնակումներն այս տարի կպսակվեն հաջողությամբ: 2008թ. այծեղջյուրի

կյանքում և անձնական հարաբերություններում տեղի կունենան բարենպաստ փոփոխություններ: Հավանական է սպասված երեխայի ծնունդ: Այս տարվա ընթացքում դուք հնարավորություն կունենաք ազատվել ավելորդ քաշից:

Խորհրդանիշը՝ այծ, աշտարակի արտաքին մասում տեղադրված ժամացույց, քարը՝ ռոնաքար, մարմար, թիվը՝ 4, 7, 10, գույնը՝ կապույտ, սև, մուգ մանուշակագույն, բաց դեղին: Բնավորության հատկանշական գիծը՝ պահպանողականություն:

Ջրիս, 21 հունվար 20 փետրվար
Գալիք տարին Ջրիսներին չի խստանում նյութական կայունություն, սակայն սիրո հարցում նրանց սպասվում է իսկական հրավառություն: 2008թ. առաջին ամիսներին դուք կծախիք սիրո ալիքների վրա: Անուսնացած ջրիսները կուրախանան երեխաների հաջողություններով նրանց կայացրած ծիշտ որոշումներով: Աշնանը ուշադրություն դարձրեք առողջությանը: Այս տարվա ընթացքում աշխատանքային առանձնակի փոփոխություններ չեն նկատվի:

Խորհրդանիշը՝ բացված թերթ, քարը՝ շափուղա, թիվը՝ 11, գույնը՝ կարմիր, ոսկեգույն վարդագույն: Բնավորության հատկանշական գիծը՝ անկանխատեսելիությունը:

Չկներ, 21 փետրվար - 20 մարտ
Գալիք տարուն ձկները կհանդիպեն գործընկերների, որոնք կօգնեն նրանց հասնել հաջողությունների: 2008թ. ձեր ամուսնությունը կամ սերը կանցնեն փորձությունների միջով: Աշխատեք չլեկտրոնանալ խիստ մտքերի վրա, չտրվել անկուսակալ տրամադրությանը: Աշխատանքում կհասնեք հաջողությունների, զառանգել կկարողանաք խոշոր գումար վաստակել:

Խորհրդանիշը՝ խեցի, ալիքներ, քարը՝ մարգարիտ, թիվը՝ 3, 9, 12, գույնը՝ ծովի կապույտ, կարմրամանուշակագույն: Բնավորության հատկանշական գիծը՝ համբերատարություն:

Յուլ, 21 ապրիլ - 20 մայիս
Գալիք տարին նախորդից ավելի հաջող կլինի: Կարիերայում և անձնական կյանքում սպասվում են նոր և արդյունավետ փոփոխություններ: Միայնակ ցուլերը կարող են հանդիպել իրենց մեծ սիրուն: Անառը կանցնի ռոմանտիկ հարաբերությունների, կրթոս հանդիպումների մեջ: Այս տարի դուք ստիպված կլինեք հաղթահարել բնական ծուլությունը և վերջապես կզբաղվեք ձեր առողջությամբ: Աշխատանքում սպասվող փոփոխությունները կպակվեն հաջողությամբ:

Խորհրդանիշը՝ ցուլ, քարը՝ զմրուխտ, շափուղա, կանաչ մարմար, թիվը՝ 2, 6, գույնը՝ կանաչ, դեղին: Բնավորության հատկանշական գիծը՝ կայունությունը:

Երկվորյակ, 21 մայիս - 21 հունիս
Դուք ամեն ինչի կհասնեք, եթե ճիշտ կողմնորոշվեք և ձեր առջև դնեք լուրջ նպատակներ, հավատաք ձեր ուժերին և ավելորդ անգա չնյարդայնանաք: Եթե կարողանաք ձեր լավ հարաբերությունները պահպանել ամուսնու կամ ընկերոջ հետ, ուրեմն ձեզ սպասվում են հաճելի անակնկալներ: Դուք համույթ կստանաք կյանքից, սերը ձեզ

Խեցգետին, 22 հունիս - 23 հուլիս
Այս տարին ձեզ համար կլինի փոփոխությունների տարի: Բոլոր հարաբերությունները չե, որ կարող են անցնել փորձությունների միջով և հարատևել: Օգնություն կստանաք այնտեղից, որտեղից բացարձակ չեք սպասում: Նոր տարին բարենպաստ է անձնական հարաբերությունների ստեղծման, նոր սիրավեպերի համար: Փորձեք վարել աշխույժ կյանք, խուսափեք նստակյաց աշխատանքից: Մի մոռացեք վիստամիներ ընդունել, հանգստացեք բնության գրկում:

Խորհրդանիշը՝ խեցգետին, սիրտ, քարը՝ մարգարիտ, լուսնաքար, թիվը՝ 2, 6, գույնը՝ ծերմակ, երկնագույն, բաց մանուշակագույն, արծաթագույն: Բնավորության հատկանշական գիծը՝ զգացմունքայնություն, զգայականություն:

Առյուծ, 23 հուլիս - 23 օգոստոս
Արքայական կեցվածք և քնքուշ ժպիտ: Միթե՞ հնարավոր է դիմադրել առյուծի նշանի տակ ծնվածներին: Հավատացեք ձեր ուժերին և մի վախեցեք դժվարություններից: Կսիրահարվեք մի քանի անգամ: Առողջության հետ կպաված խնդիրներ չեք ունենա: Աշխատանքում առաջընթացի նոր տարբերակներ կունենաք: Իրատեսորեն գնահատեք ձեր ուժերը և մի վերցրեք ձեզ վրա ավելի քան կարող եք:

Բնավորության հատկանշական գիծը՝ առյուծ, կարապ, քարը՝ արձանաճ, թիվը՝ 1, գույնը՝ կարմիր, դեղնաշականակագույն, ոսկեգույն, սև: Բնավորության հատկանշական գիծը՝ մեծահոգություն:

Խորհրդանիշը՝ կույս, քարը՝ կատվի աչք, թիվը՝ 2, 3, 6, գույնը՝ ծերմակ, երկնագույն, կանաչ, մանուշակագույն: Բնավորության հատկանշական գիծը՝ աշխատասիրություն:

Կշեռք 24 սեպտեմբեր - 23 հոկտեմբեր
Կշեռքի նշանի տակ ծնվածներին Նոր տարին կբերի փորձություններ: Անհրաժեշտ է, որ ինքներդ ձեր մեջ ուժ գտնեք և զբաղվեք միայն նրանով, ինչն իսկապես ձեզ դուր է գալիս: Չնայած ժամանակավոր հիասթափությունների՝ ձեր սիրտը բաց է նոր զգացումների համար: Հոկտեմբերին և նոյեմբերին կառաջանա նյարդային լարվածություն, հոգնածություն կզգաք:

Ֆահրադ Ափուջանյանը իր ընտանիքով ցավակցում է Անահիտ Հակոբյանին նրա սիրելի մոր՝ Սոնա Հակոբյանի մահվան առթիվ:

Ֆահրադ Ափուջանյանի ծննդյան տարեդարձի նշանում:
Ստորագրված է տպագրության 26.12.2007թ.

Համարի թողարկման պատասխանատու՝ Ֆ. ԱՓՈՒՋԱՆՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ «Լուսարձակ»
թերթի խմբագրության: Ծավալը՝ 1 տպագր.
մամուլ:
Տպագրանակը՝ 750 օրինակ
Գրանցման վկայական 01ՄՈՍ00130

Տպագրվել է «ՄԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:
Վանաձոր, հեռ.՝ 4-02-29:
Նյութերը չեն գրախոսվում, չեն վերադարձվում:
Հեղինակները պատասխանատու են փաստերի
ճշտության համար:

Լրատվական գործունեությունը իրականացնող՝
«Ափուջանյան և Որդիներ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Ա. Ավետիսյան փող. 7/23:
Վկայական՝ 03 Ա 05 23 38, տրման օրը՝ 05.08.02թ.
Գինը պայմանագրային: